



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ք. Վանաձոր, Մ. Գոշի 6

հեռ. 2-40-32

N-ԼԴ/0017/11/09

08 ապրիլի 2010թ..

ՆԵ ԿՏ Գ Տ Դ Կ Ո

«ՆԵԼՄԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՄԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՍԱԲՈՒՆՅԻՆ

Ուղարկվում է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.04.2010թվականի
որոշումը:

Առդիր՝ որոշումը «3» թերթից:

ԴԱՏԱՎՈՐ

 Մ.ՄԵԼՈՆՅԱՆ



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«08» ապրիլի 2010թ.

ք.վանաձոր

ՀՀ ԼՈՒՈՒՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՎԵՏՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ

Մ.ՄԵԼՔՈՆՅԱՆ
Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԴԱՏԱԽԱԶ

Վ.ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

«ՎԵՆՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻ ԱԿԱՆ
ԱՍՄԱՐԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱ-
ՍԵՆՅԱԿ» ՎԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԱԶԱԼՅԱՆԻ

Դեմքաց դատական նիստում քննության առնելով «Վենսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահի դիմումը՝ Լոռու մարզի դատախազին 29.08.2009թ.վականին Վ.Դոյմազյանի կողմից պաշտոնեական դիրքի չարաչափման մասին կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելուն և որոշման օրինակը կազմակերպությանը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

«Վենսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահը դիմել է դատարան՝ Լոռու մարզի դատախազին Վ.Դոյմազյանի կողմից պաշտոնեական դիրքի չարաչափման մասին 29.08.2009թ.վականին կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման վերաբերյալ որոշում կայացնելուն և որոշման օրինակը կազմակերպությանը տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Դիմումը ներկայացվել է հետևյալ հիմնավորումներով.

«Վենսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի վանաձորի գրասենյակ» ՎԿ-ի նախագահ Ա.Սարգսյանը 16.11.2009թ.վականին դիմում է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան, հայտնելով, որ վանաձոր քաղաքի Մ.Խորենացու 10/17 հասցեի բնակչուհի Շուշանիկ Սարգսյանը իր խախտված իրավունքների պաշտպանության համար 21.08.2009թ.վականին դիմել է «Վենսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի վանաձորի գրասենյակ» ՎԿ-ին: Ըստ Շուշանիկ Սարգսյանի, սևփականության իրավունքով իրեն պատկանող Մ.Խորենացու 10/17 հասցեի բնակարանը, անօրինական խուզարկվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժանմունքի քննիչ Վ.Դոյմազյանի և ոստիկանության նրնք աշխատակիցների կողմից: 21.08.2009թ. Շուշանիկ Սարգսյանը դիմում է ներկայացրել ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժին, խնդրելով պատռախանել, թմ. օրենք-ի քննիչի կողմից բավարար կամ ենթադրություններ հարուցող հիմքերը, որ իր բնակարանում կամ իր մոտ գտնվել են հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ստացված առարկաներ, ինչպես նաև այլ առարկաներ, որոնք կարող են որևէ նշանակություն ունենալ թիվ 19115009 քրեական գործի համար, որն է թիվ 19115009 քրեական գործով իր կարգավիճակը, օմ նկատմամբ է հարուցված թիվ 19115009քրեական գործի և ինչ մեղադրվածը:



է առաջադրված այդ գործով մնողայային: Մակայն վերջ նշված հարցերի շուրջ 24.08.2009թ. ՀՀ Ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի կողմից ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ Շուշանիկ Մարգարյանի բնակարանում խուզարկություն չի կատարվել: 26.08.2009թ.վականին Հեղինե Սարգսյանը, Վերա Մարիկյանը, Գայանն Դողոսյանը և Դ.Մանուկյանը դիմումներ են ներկայացրել իրենց կազմակերպությանը այն մասին, որ Շուշանիկ Մարգարյանի՝ Մ.Խորենացու 10/17 հասցեի բնակարանում քննիչ Վ. Դոյմազյանը կատարել է խուզարկություն: 27.08.2009թ.վականին «Նվյսինկյան Բաղաբացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի կողմից դիմում է ներկայացվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ստանալու վանաձոր քաղաքի Մ.Խորենացու 10/17 հասցեի բնակարանում խուզարկության թույլտվության որոշման պատճենը, սակայն Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավարը 08.09.2009թ.վականին գրությամբ պատասխանել է, որ դատարանը վանաձոր քաղաքի Մ.Խորենացու 10/17 հասցեի բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվության մասին որոշում չի կայացրել: 29.08.2009թ.վականին քննիչ Վ. Դոյմազյանի կողմից պաշտոնական դիրքի չարաչափման մասին իրենց կազմակերպության կողմից հաղորդում է ներկայացվել ՀՀ Գլխավոր դատախազին, որը 12.09.2009թ.վականին մակագրվել է Լոռու մարզի դատախազին: Լոռու մարզի դատախազը օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում չի կայացրել և դրա պատճենը չի ներկայացրել հանցագործության մասին հաղորդում ներկայացրած իրավաբանական անձին, այլ թիվ Պ-458-09 գրությամբ անդրադարձել է խուզարկության իրականացման օրինականության կամ անօրինականության հիմքերին, այնինչ Լոռու մարզի դատախազը պարտավոր էր քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնել և պատճենը ուղարկել հանցագործության մասին հաղորդում տված իրավաբանական անձին՝ համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 181 և 185 հոդվածների:

Պատճառաբանելով, որ հանցագործության մասին հաղորդում ստանալու դեպքում Լոռու մարզի դատախազը պետք է կայացնել որոշում, համաձայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 181, 182, 185 հոդվածների և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի, «Նվյսինկյան Բաղաբացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սարունցը հիմք ընդունելով, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը, դիմում է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով պարտավորեցնել Լոռու մարզի դատախազությանը 29.08.2009 թ.վականին Վ.Դոյմազյանի կողմից պաշտոնական դիրքի չարաչափման մասին կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման վերաբերյալ կայացնել որոշում և որոշման օրինակը տրամադրել կազմակերպությանը:

25.12.2009թ.վականի որոշմամբ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է դիմումն այն պատճառաբանությամբ, որ ՀՀ Քրեական օրենսգրքի 103 և 290 հոդվածներից հետևում է, որ դիմումատու պարտավոր էր Լոռու մարզի դատախազի գործողությունը նախ թողոքարկել վերադաս դատախազին, ապա դատական կարգով:

18.01.2010թ.վականին «Նվյսինկյան Բաղաբացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սարունցը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2009թ.վականի որոշման դեմ վերաքննիչ թողոք է ներկայացրել, պատճառաբանելով, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը կիրառել է ուժը մասնակի կորցրած իրավական նորմ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 09.02.2010թ.վականի որոշմամբ վերաքննիչ թողոքը բավարարվել է, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.12.2009թ.վականի դիմումը մերժելու մասին որոշումը քննանկել է և նյութերն ուղարկվել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

18.03.2010թ.վականին թիվ ԼԳ-0017/11/09 նյութերը ուղարկվել են Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2.Գործի փաստական հանգամանքները.

Գատական նիստում «Նվյսինկյան Բաղաբացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի ներկայացուցիչ Ա.Զայանը դիմումը պնդեց, ամբողջությամբ, հստակեցնելով, որ իրենց դիմումի նպատակն է ապահովել ՀՀ Քրեական դատավարության 181 հոդվածի կատարում, որի համաձայն հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝ քրեական գործ հարուցելու



մասին, քրեական գործ հարուցելը մերժելու մասին, հաղորդումն ըստ ննթակայության հանձնելու մասին: Մինչդեռ Լոռու մարզի դատախազության կողմից իրենց կազմակերպության ներկայացրած հաղորդման վերաբերյալ ուղարկվել է գրություն, այսինքն օրենքով սահմանված կարգով որոշում չի կայացվել և չի տրամադրվել: ՀՀ-ի ներկայացուցիչ Ա.Ջալալյանը խնդրեց բավարարել դիմումը՝ պարտավորեցնել Լոռու մարզի դատախազությանը 29.08.2009 թվականին Վ.Դոլմազյանի կողմից պաշտոնական դիրքի չարաչափման մասին կազմակերպության կողմից ներկայացված հաղորդման վերաբերյալ կայացնել որոշում և որոշման օրինակը տրամադրել կազմակերպությանը:

Լոռու մարզի դատախազության դատախազ Վ.Ստեփանյանը խնդրեց դիմումը մերժել պատճառաբանելով, որ «Նկսիմկյան Բաղարացիական Ասամբլեայի Վանձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Արթուր Սարունցի վերը նշված դիմումը Հանրապետության Գլխավոր դատախազը ուղարկել է Լոռու մարզի դատախազին: Այն քննարկվել է վերջինիս կողմից և դիմումում նշված հանգամանքները չեն հետաուտվել, ինչի վերաբերյալ գրությանը տևողակ է ստեղծվել ՀՀ-ի նախագահ Արթուր Սարունցը: Բացի այդ Լոռու մարզի դատախազությունը քննիչի կողմից կատարած պաշտոնական դիրքի չարաչափման վերաբերյալ քրեական գործ հարուցելու իրավասություն չունի: Հանցագործության մասին հաղորդում ներկայացվելու դեպքում, պետք է նախապատրաստվեն նյութեր, վերցվեն բացատրություններ, սակայն այսօր դատախազությունը քրեական գործի նյութեր նախապատրաստելու լիազորություններ չունի, հետևապես նաև իրավունք չունի քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնել: ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 181 հոդվածի համաձայն: ՀՀ Գլխավոր դատախազը ստանալով հաղորդումը, նպատակահարմար է գտել այն ուղարկել Լոռու մարզի դատախազին, որն էլ գրությանը պատասխանել է դիմումատուին: Լոռու մարզի դատախազությունը նյութեր նախապատրաստելու լիազորություն չունի, որն էլ կարող է դրվել քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու հիմքում, հետևապես ոստիկանության աշխատակցի նկատմամբ: Եթե դիմումատուսն գտնում է, որ քննիչի կողմից կատարվել է պաշտոնական դիրքի չարաչափում և պետք է որոշում կայացվի քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին, ապա հաղորդումը պետք է ներկայացնի հատուկ քննչական ծառայությանը, որտեղ կվերցվեն բացատրություններ, կնախապատրաստվեն համապատասխան նյութեր, որոնց հիման վրա էլ կամ որոշում կկայացվի քրեական գործ հարուցելու մասին կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

- Դիմումատուսն ներկայացրել է հետևյալ ապացույցները.
 - 29.08.2009թվականի «Նկսիմկյան Բաղարացիական Ասամբլեայի Վանձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սարունցի գրությունը ՀՀ Գլխավոր դատախազ Ա.Նովակովյանին՝ քրեական գործ հարուցելու մասին
 - 12.09.2009թվականի կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Ա.Խաչատրյանի գրությունը Լոռու մարզի դատախազ Կ.Շահբազյանին և «Նկսիմկյան Բաղարացիական Ասամբլեայի Վանձորի գրասենյակ» ՀԿ-ի նախագահ Ա.Սարունցին, համաձայն որի Լոռու մարզի դատախազի քննարկմանն է ուղարկվել ՀՀ Գլխավոր դատախազին հասցեագրված դիմումը
 - 18.09.2009թվականի Լոռու մարզի դատախազ Կ.Շահբազյանի պատասխան գրությունը


3.Դատարանի իրավական վերլուծությունները.

Լսելով կողմերին, ուսումնասիրելով և գնահատելով ներկայացված ապացույցները քազմակերպմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ դատարանը գտնում է, որ «Նկսիմկյան Բաղարացիական Ասամբլեայի Վանձորի գրասենյակ» ՀԿ-ի դիմումը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք է:

ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի իրավունքները վերականգնելու իրավունք (...):

ՀՀ Բրեւակն դատախազության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասը նախատեսում է քրեական գործի հարուցման լիազորություններն են (...):



և յուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների /անգործության/ դեմ բողոքները:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 278 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կապաձյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և նթն նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելու, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 181 հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1. քրեական գործ հարուցելու մասին
- 2. քրեական գործ հարուցելը մերժելու մասին
- 3. հաղորդումն ըստ նմանաբանության հանձնելու մասին

Դատաքննությանը և գործի փաստական հանգամանքներով դատարանը հաստատված համարնց, որ «Նյուիսկյան Թադարացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության կողմից 29.08.2009 թվականի ՀՀ Գլխավոր դատախազին ներկայացված և 12.09.2009 թվականի ՀՀ Լոռու մարզի դատախազին մակագրված հաղորդման վերաբերյալ Լոռու մարզի դատախազի կողմից որոշում չի կայացվել: Լոռու մարզի դատախազը նշված հաղորդմանը պատասխանել է 18.09.2009 թվականի Դ-458-09 գրությամբ:

ՀՀ Վճարելի դատարանը Մյանմիկ Ավետիսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ-0019/11/09 գործով որոշման մեջ նշել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից ներկայացված գրությունները ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի իմաստով որոշում չեն հանդիսանում և հետևաբար չեն կարող առաջացնել նույն դատավարական հետևանքները, ինչ որոշումները, նաև պարզաբանվել է, որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չարահայտնելն այդ դեպքում հավասարազոր է անգործության:

Այսպիսով Լոռու մարզի դատախազը, հանցագործության վերաբերյալ հաղորդմանը գրությամբ պատասխանելով, չի պահպանել հանցագործության վերաբերյալ հաղորդում ստանալու դեպքում որոշում կայացնելու՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 181 հոդվածում ամրագրված պահանջը, այսինքն՝ ՀՀ Վճարելի դատարանի վերոնշյալ որոշման մեջ առկա մեկնաբանության իմաստով՝ դրսևորել է անգործություն: Ինչ վերաբերում է մասնակցող դատախազի այն պատճառաբանությանը, որ «Լոռու մարզի դատախազությունը նյութեր նախադատարանտեղի լիազորություն չունի, որն էլ կարող է դրվել քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելու հիմքում, հատկապես սուղիկանության աշխատակցի նկատմամբ», ապա դատարանը անհրաժեշտ է համարում նշել, որ տվյալ դեպքում դատախազությունը պետք է դրսևորել չ թն անգործություն, այլ պահպանելով քրեադատավարական օրենքի պահանջները և համապատասխան որոշում և օրենքով սահմանված կարգով որոշման պատճառով մեղադրանքի հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ինչն ակնկալում էր ստանալ դիմումատուն, ինչի վերաբերյալ խնդրել է նաև մատուցելու հր ղիմումի կրթափակիչ մատում:

ՀՀ Մասնամատուցության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործի



մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ ի ապահովումն սահմանադրական վերահիշյալ պարտականության կատարման, մինչդատական վարույթում հակորոշություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օրնյկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են ղեկավարելու /ուղղորդելու/ հետաքննության մարմնի, քննիչի դատավարական գործունեությունը, ինչպես նաև լուծելու վերջինիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերադասված է դատարանին: Վերոգրվելու գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով ղեկավար գուցումներ և այլ հանձնարարություններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզման գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում վերացնելով նաև վերջիններիս որոշումները:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 41 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 290 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինչպես դատախազը, այնպես էլ դատարանն իրավասու են քննելու վերահիշյալ մարմինների, այդ թվում՝ նաև դատախազի՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր լինելու դեմ բերված բողոքները: Սակայն տարբեր են այդ բողոքների քննության արդյունքում խախտված իրավունքի վերականգնման նպատակները, ձևերը և իրավական հետևանքները, մասնավորապես, դատական վերահսկողությունն իրականացվում է անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու իրավասու մարմնի /պաշտոնատար անձի/ պարտականության մասին որոշման կայացմամբ: Հետևաբար, դրանով է պայմանավորված նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի նորմատիվ պահանջը, որին համապատասխան բողոք քննելու արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե հետաքննության մարմնի, քննիչի և օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմնի դատավարական որոշակի գործողություններ կատարելու գուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես տեղի ունի դատախազական հակորոշության դեպքում, այլ այդ մարմինների և պաշտոնատար անձի կողմից թույլ տրված օրինախախտումը վերացնելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը պարտավորեցնելով, որը թխում է դատական իշխանության սահմանադրական բովանդակությունից և դրան համապատասխան՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 23 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում և արտահայտում է իրավունքի շահերը:

Վերոգրյալի հիման վրա, դատարանը գտնում է, որ «Նելսինյան Բաղաբացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահի դիմումը նմանապես է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նելսինյան Բաղաբացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահի դիմումը **բավարարելու**:
Պարտավորեցնել Լուսու մարզի դատախազին Վ.Պարսևյանի կողմից պաշտոնական դիրքի չարաչափման մասին 29.08.2009 թվականին ներկայացված հաղորդման վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում և որոշման օրինակը պարտադրաբար կազմակերպությանը:
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ օրենսդրության իրավաբանական պահից 10 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ



Մ.ՄԵԼՈՆՅԱՆ